# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համացանցային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-25/142 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի հունվար 8-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-25/142-1 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հունվարի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունվարի 23-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը, համաձայն՝ Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2026 թվականի հունվար 8-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-25/142-1 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**